



ԾՐԱԳՐԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

«Էներգետիկայի Հայկական Գործակալություն» հիմնադրամն իրականացնում է «Լուսավոր Սահման» բարեգործական ծրագիրը, որի նպատակն է Հայաստանի և Արցախի սահմանամերձ համայնքներում մշտապես բնակվող ընտանիքներում կապիտալ ներդրում կատարել երկարաժամկետ էներգախնայողություն ապահովող լուսադիոդային LED լամպերի տեսքով: Ծրագրի ուղղակի արդյունքն է փաստացի էներգախնայողությունը, իսկ ոչ ուղղակի արդյունքներից է համայնքային բնակչության տեղեկացվածության մակարդակի բարձրացումն ու կարողությունների զարգացումը:

«Լուսավոր սահման» ծրագիրը 2018թ. դեկտեմբերի 1-ից 6 ամիս ժամկետով՝ մինչև 2019թ. հունիսի 1-ը իրականացվում է Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության և Եվրասիա համագործակցություն հիմնադրամի ՔՀ Կամուրջ ծրագրի շրջանակներում՝ Եվրոպական միության ֆինանսավորմամբ:

Ծրագրի այս փուլում նախատեսվում է ունենալ հետևյալ արդյունքները՝

- 1200 LEDաֆիկացված ընտանիքներ (6000 LED լամպ)
- 590 հազ. կՎտԺ տարեկան էներգախնայողություն
- 26 մլն ՀՀ դրամ ծախսերի խնայողություն
- 260 տոննա կրճատված CO2 տարեկան
- 50-ից ավել շահառուների կարողությունների զարգացում
- 5000-ից ավել շահառուների տեղեկացվածության մակարդակի բարձրացում

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է կազմակերպել և իրականացնել «Երիտասարդների կարողությունների զարգացում» երկու փուլերով՝ բարձրացնել համալսարանների և կրթական հաստատությունների աշակերտների ու ուսանողների տեղեկացվածության մակարդակը էներգախնայողության անհրաժեշտության և երկրի էներգետիկ աղքատության կրճատմանը միտված գործողությունների և հնարավորությունների վերաբերյալ:

ՓՈՒԼ 1: Նախատեսվում է տեսական և գործնական պարապունքներով հազեցած դասընթացների կազմակերպում՝ ուսանողների և աշակերտների ակտիվ մասնակցությամբ: Դասընթացի ժամանակ ուսանողները հնարավորություն կունենան գիտելիքներ ստանալ ՀՀ էներգետիկ համակարգի, Վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության ոլորտի ընդհանուր զարգացման հեռանկարների, Լուսադիոդային լամպերի՝ որպես էներգախնայողության գործիք օգտագործման առավելությունների և «Լուսավոր Սահման»





Ծրագրի՝ կատարված աշխատանքների, սոցիալական պատասխանատվության կարևորության և հետագա անելիքների մասին:

Դասընթացները նախատեսվում է իրականացնել 2019թ. փետրվար-մարտ ամիսներին, անսահմանափակ թվով ուսանողների և աշակերտների մասնակցությամբ: Դասընթացների արդյունքում նախատեսվում է յուրաքանչյուր ուսումնական հաստատությունում կազմել կամավորական խմբեր՝ 5-7 ուսանողի/աշակերտի մասնակցությամբ:

ՓՈՒԼ 2: Նախատեսվում են կամավորական աշխատանքներ ինչի ընթացքում Կամավորական խմբերը կունենան գործիքներ, գիտելիքներ և համակարգում՝ մասնակցելու սահմանամերձ համայնքների լուսադիոդային գործընթացների իրականացմանը: Ուսանողներն ու աշակերտները կկարողանան մասնակցել ՀՀ Տավուշի և Գեղարքունիքի սահմանամերձ համայնքներում լամպերի տրամադրման և հարային իրազեկման միջոցառումներին:

Երկու փուլերի ընթացքում ծրագրի շրջանակներում թիմերը կունենան պատշաճ համակարգում, կտրամադրվեն անհրաժեշտ նյութեր և գործիքներ, կապահովվեն տեղափոխման և սնունդի ծախսերը:

«Լուսավոր Սահման» բարեգործական ծրագրի գրանցած արդյունքները

27 սահմանամերձ համայնքներում բնակվող ավելի քան 5000 ընտանիքների արդեն իսկ տրամադրվել են ավելի քան 25 000 բարձր որակական հատկանիշներ ունեցող, լաբորատոր ստուգաչափում անցած և 3 տարի երաշխիքային սպասարկում ունեցող LED լամպեր: Միջին հաշվարկներով էներգախնայողությունը 27 համայնքներում տարեկան կտրվածքով կազմում է ավելի քան 3.750 մլն կՎտժ (150 մլն ՀՀ դրամ):

«Լուսավոր սահման» ծրագիրը մեկնարկել է 2016թ. Նոյեմբերին, ի սկզբանե որպես կամավորական-հասարակական նախաձեռնություն: 2018թ. Հունիս ամսից գտնվում է «Էներգետիկայի Հայկական Գործակալություն» հիմնադրամի համակարգման ներքո՝ որպես բարեգործական ծրագիր:

Համայնքները ընտրվում են համաձայն ՀՀ Կառավարության 15 Հունվարի 2015թ. N 30-Ն «Մարտական գործողությունների հետևանքով չօգտագործվող հողատարածքներ ունեցող այն սահմանամերձ համայնքների ցանկը հաստատելու մասին, որտեղ իրականացվող գործունեությունն ազատվում է հարկերից» Որոշման ցանկի:

